



« ԹՈՂ ՏՈՒՆԻ ԲԱՆՔ ՏՂՈՅՆ ՈՐ ԻՆՉԻ ԳԱՆ » : ԴՈՒԿ. ԺԸ. 16 :

Հ Ա Տ Ո Ր Ե .

ԿՈՍՏԱՆԳՆՈՒՊՈԼԻՍ . ԱՊՐԵԼ 1 . 1876 .

ԹԻՒ 4



ՈՒՐԱՆՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿԸ

Գ Ա Ր Ո Ւ Ն
Մեր լրագիրը կարգացողներէն շա-

տերը երբ այս թիւն ընդունին, երկիրն այնպէս պիտի տեսնեն ինչպէս

տղաքն ենք, նոր կեանքով և գեղեցկութեամբ պիտի ապրինք :

դաշտերը կ'երևին սոյն պատկերին մէջ : Գաւնները բլուրներու վրայ պիտի խայտան և ոչխարները բուրգով լեցուած ըլլալով պատրաստ պիտի ըլլան խղուելու : Եւ տարակոյս չկայ որ դուք ալ այս պատկերին մէջ տեսնուած ազկան նման դաշտերն ելած պիտի ըլլաք : պայծառ օդը , ծաղիկները , ծաղկանց և այգեստաններուն անուշ բուրմունքը վայելելու :

Գարունն ուրախութեան ժամանակ է : Մենք ամէնքս կը սիրենք այս եղանակը : Բայց, սիրելի ընթերցողներս, երբէք խորհած էք թէ հաւատոյ ի՞նչ դաս կուտայ՞մեզ այս եղանակը : Ահաւասիկ այն դասը : Ծառերն և ծաղիկները ձմեռ. ատեն մեռած էին : Ահա գարունն եկաւ , և նոր կեանք , նոր գեղեցկութիւն բերաւ անոնց : Դուք այս բանն այնչափ շատ տեսած էք որ , երբ ձմեռը ծառերուն տերևները կը թափին , հոգ չէք ընէր , վասն զի գիտէք որ երբ ժամանակը գայ , անոնք ամէնն ալ նոր թարմութեամբ և առուգութեամբ պիտի ապրին : Ճիշդ այսպէս կ'ըլլայ երբ մենք ալ մեռնինք . բայց հոգ ընելու չենք , վասն զի գիտենք որ եթէ Աստուծոյ

«Քեզ ԿԸ ՍՈՐՎԵՑՆԵՄ ԱՅՐՊԷՍ ԸՆԵԼ»

Հաւ մը քալած ատեն բազի մը սաքին վրայ կոխեց : Հաւը բազին սաքին վրայ կոխելու միտք չունէր, և անոր կոխելէն բազին մեծ վնաս ալ չեղաւ : Բայց բազը ըսաւ. «Քեզ կը սորվեցնեմ այդպէս ընել» և հաւին վրայ յարձակեցաւ : Մինչդեռ բազը հաւին վրայ կը յարձակէր, իր թեւը դպաւ սաքի մը որ հոն կեցած էր : Սաքին ալ, «Քեզ կը սորվեցընեմ այդպէս ընել» ըսաւ, և բազին վրայ յարձակեցաւ : Այս միջոցին սաքին սաքը դպաւ կատուի մը որ անկէ կ'անցնէր, կատուն ալ, «Քեզ կը սորվեցնեմ այդպէս ընել» ըսաւ, և յարձակեցաւ սաքին վրայ : Մինչդեռ կատուն սաքին վրայ կը յարձակէր, պուշը զարնուեցաւ ոչխարի մը տղին որ մօտը կը կենար : Ոչխարը, «Քեզ կը սորվեցնեմ այդպէս ընել» ըսաւ, և կատուին վրայ յարձակեցաւ, և այն ատեն կոխեց շունի մը ոտքին վրայ որ մօտը արեւոտ տեղ մը պառկած կը քնանար : Շունն ալ, «Քեզ կը սորվեցնեմ այդպէս ընել» ըսաւ, և ոչխարին վրայ գիւմեց, բայց մինչդեռ շունը կը վազէր, անոր սաքը դպաւ ծեր կովու մը որ գրան առջեւ կեցած էր : Կովը, «Քեզ կը սորվեցնեմ այդպէս ընել» ըսաւ, և շունին վրայ յարձակեցաւ, բայց այս միջոցին անոր եղջիւրը զարնուեցաւ ձիու մը որ ծառի մը քով կը կենար : Ձին ալ, «Քեզ կը սորվեցնեմ այդպէս ընել» ըսաւ, և կովուն վրայ յարձակեցաւ : Այսպէս կարգով իրար հալածել սկսան : Ձին կովուն, կովը շան, շունը ոչխարին, ոչխարը կատուին, կատուն սաքին, սաքը բազին, բազն ալ հաւին ետեւէն կը վազէին : Ագարակին մշակին որ այս զիրար հալածող կենդանիներուն հոգ կը տանէր, սկսաւ «Հի, հի» կանչել և ըսել. «Ես ալ ձեզ կը սորվեցնեմ այդպէս ընել» : Եւ հաւը բռնելով ախտը, սաքը դաշտը, բազը լճակը, շունը փողոցը, կատուն տունը, ոչխարը փարախը, կովը գաւիթը, ձին ալ իր տեղը դրաւ, և այսպէս ամենքն ալ իրենց հասունչունն առած եղան :



ԵՂՋԵՐՈՒԻ ՈՐՍՈՐԳՈՒԹԻՒՆ

Շատ հին ատեններն այս երկրիս ամէն կողմը բազմաթիւ եղջերուներ կը դանուէին : Բայց մարդիկ ուր որ եղջերու գտան որսացին, և հիմա քաղաքաց շահիդէն հեռու, ամայի լեռներու մէջ միայն կան եղջերուաց այնպիսի խումբեր, որոնց մէկը վերի պատկերին մէջ կը տեսնուի :

Մնցեալ որ եղջերուաց վրայ պատմութիւն մը կարգացի և կ'ուզեմ զայն ձեզ ըսել : Ձեզ կը թողում վճռել թէ այս պատմութիւնը ճշմարիտ է թէ ոչ : Ժամանակաւ շուն մը կար որ շատ հարտ և սնապարծ էր : Թր մը այս շունը իր փողոցի բոլոր շուները կանչեց և անոնց ըսաւ. «Ես ոսկոր կրծելէ յոգնեցայ, ալ այսուհետեւ որսորդութիւն պիտի ընեմ. դուք հոս սպասեցէք և ես երթամ եղջերու մը որսամ» : Բոլոր շուները մէկտեղ անոր ըսին. «Ի՞նչ եղջերու պիտի որսաս, միթէ կրնամ այդպիսի որս ընել» : «Օ՛հ, այո», ըսաւ շունը. «տեսէք սկռաներս և ձիրաններս» : Եւ այս սնապարծ շունն այնպիսի վայրագ կերպարանք մը առաւ, որ բոլոր իր ընկերները համազուեցան թէ ան եղջերու որսալու կարող պիտի ըլլայ : Ուստի բոլոր շուները հոն մնացին և իրենց որսորդ ընկերին յաղթական դարձին սպասելով ընտ

ոսկոր չկերան որ ախորժակնին չաւրուի : Մնապարծ շունն, որուն անունն էր Պարծուկ, ամեհաբար վազեց դէպի անտառը և քիչ մը ետքը դեղեցիկ եղջերուի մը հանդիպեցաւ : Եղջերուն անոր նայելով կանգ առաւ, Պարծուկն ալ կանգ առաւ : Եղջերուն անոր հարցուց. «Ըսէ նայիմ, ինչ կ'ուզես» : Պարծուկը չէր գիտեր թէ այսպիսի պարագայի մը մէջ ի՞նչ ընելու է, ուստի սկսաւ եղջերուին դէմ հաչել : Եղջերուն անոր ըսաւ. «Շատ անքաղաքավար ես» : «Ոչ, ես անքաղաքավար չեմ», ըսաւ Պարծուկը, «այլ որսորդութեան ելայ, և խօսելու ժամանակ չունիմ, եղջերու մը պիտի որսամ որպէսզի տուն տանելով ճաշ ընեմ» : Եւ զիս որսալ կ'ուզես. այնպէս չէ՞» հարցուց եղջերուն : «Այո», պատասխանեց Պարծուկը : Եղջերուն ասոր վրայ խնդաց : Պարծուկը բարկացաւ անոր խնդալուն վրայ, և ջանաց եղջերուին ազդբերել խածնել : «Հոս նայէ», ըսաւ եղջերուն, «եթէ դուն իմ ազդբերոս խածնես, ես ալ քեզ կից կը զարնեմ» : «Աղէկ, ազդբերդ չեմ խածնէր, բայց դու ի՞նչ այնչափ վեր մի բռնէր», ըսաւ Պարծուկը, վասն զի մտքէն չափեց տեսաւ որ եղջերուին պարանոցը պիտի չկրնայ համել : Եղջերուն այլ ևս պատասխան չտուաւ, և Պարծուկը սկսաւ անոր շուրջը պատիլ ագին խածնելու : Բայց եղջերուին ագին կարծ և հասակը բարձր էր, ուստի Պարծուկը չէր կրնար ագին ալ խածնել : Ապա ըսաւ եղջերուին. «Ի՞նչ չես համարձակիր գլուխդ վար ծռել» : «Ե՛ս, գլուխս վար ծռել չեմ համարձակիր», ըսաւ եղջերուն, և գլուխն այնչափ վար ծռեց որ մեծ եղջիւրները գետին հասան : Պարծուկն անմիջապէս առաջ նետուեցաւ եղջերուն պարանոցէն բռնելու, բայց եղջերուին խոշոր եղջիւրները Պարծուկին փոքին տակն անցան, և եղջերուն զայն ճամբուն միւս կողմը փշալից մացառի մը վրայ նետեց : Առջի բերան Պարծուկ չգիտցաւ թէ ինչ եղաւ, բայց երբ խելքը գլուխն եկաւ, գլուխութեամբ չորս

զին նայեցաւ և տեսաւ որ եղջերուն
 ելեր կ'երթար: Պարծուկն ինքրիբն
 ըսաւ. «Եղջերուն վրաս կը խնդայ,»
 բայց խոհեմութիւն սեպեց որ այն
 օրն ալ եղջերու չորսայ, և տուն
 դնաց: Երբ Պարծուկը դիւզն հասաւ,
 բոլոր շուները դայն գիմաւորելու
 եկան և սկսան հարցունել. «Ո՞ր է
 եղջերուն: Հատ մը չտեսա՞ր?» Այո,
 տեսայ,» պատասխանեց Պարծուկ:
 «Հատ մը չտեսնեցիր, չորսացիր,»
 հարցուցին դարձեալ շուները: «Եղ-
 ջերուն թող չտուաւ որ զինքն որ-
 սամ,» պատասխանեց Պարծուկն և
 ազին ազդերուն մէջտեղ կախ ձգեց:
 Բոլոր շուները մէկէն սկսան «Հաւ
 հաւ, հաւ հաւ, հաւ հաւ» պոռալ,
 և Պարծուկը շատ զղջաց որ գեռ.
 չկատարած մէկ բանին վրայ
 առաջուց պարծենալով խայ-
 տառակ եղաւ:

ՄԱՐԿՈՍԻ ՃՍՄԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Երբ Մարկոսի հայրն Երու-
 սաղեմէն մեկնեցաւ, միտքը
 գրաւ Դամասկոս ալ երթալ,
 բայց այն Անդղիացի ճամբորդ-
 ներն, որոնց հանդիպեցաւ
 ճամբուն վրայ, անոր ըսին թէ
 Դամասկոսի մէջ հիւանդու-
 թիւն կայ, և Մարկոսի հայրն
 ալ այս լուրին վրայ միտքը
 փոխեց, և Մարկոսին ըսաւ.

«Այսօր հիւանդութեան ատեն
 աւելի աղէկ է չտեսնել այն մեծ քա-
 ղաքն, անոր գեղեցիկ պարտէզներն
 և Դամասկոսի գետերն, որոց վրայ
 կը խորհէր նէեման երբ անոր հրա-
 ման եղաւ Յորդանանի մէջ լուացուիլ:»
 Ասոր վրայ Մարկոս ցաւեցաւ, քանզի
 նա կը փափաքէր Սուրբ գրոց մէջ
 յիշուած տեղերէն շատերը տեսնել:
 Մարկոս և անոր հայրն ետ դարձան
 Նազարէթի ճամբան ուրկէ եկած
 էին, և հասան ճամբայ մը որ դա-
 նոնք Հաիֆա տարաւ: Հաիֆա փոքր
 քաղաք մ'է կարմելու լեռան ստորո-
 տը: Հաիֆայէն Աստորիական նաւ մը
 նստան Իսկէնտէրուն գալու, և անոնք
 կը խորհէին անկէ ցամաքի ճամբով
 հայրենիք դառնալ: Երբ նաւ նստան,
 յանկարծ մեծ փոթորիկ բրբաւ, և
 նաւորներուն ամէնքը ծովի հիւան-
 դութեան բռնուեցան: Մարկոս այս
 միջոցին դարձեալ խորհեցաւ որ ե-
 թէ ցամաք ելլէ, ուրիշ անգամ ծո-
 վային ճամբորդութիւն չընէ: Բայց
 փոթորիկէն աւելի գէշ արկած մը
 պատահեցաւ, քանզի նաւուն մեքե-

նաներէն մին աւրուեցաւ և անիւն
 այլ ևս չգառնալով նաւը կեցաւ, և
 ծովուն ալեաց վրայ ահաւոր կեր-
 պով տարուբերել սկսաւ: Վերջապէս
 նաւապետը առադատու բացաւ և
 երկրորդ օրը յաջողեցաւ նաւը ցա-
 մաքին մօտեցնել: Նաւորներն Պէյ-
 րութ ելան, և մինչդեռ նաւն իր աւ-
 րուած մեքենան նորոգել տալու հա-
 մար հոն կ'ապասէր, Մարկոսի հայրն
 իր որդին հեռն առնելով Լիբանանի
 լեռը դնաց մայրիները տեսնելու:
 Լիբանանցիք կ'ըսեն թէ այժմու մայ-
 րիներէն ոմանք կային այն լեռան
 վրայ Տիւրոսի Քիբամ թաղաւորին
 ժամանակն ալ, որ Սողոմոնի տաճա-
 րին համար մայրիներ զրկեց, սակայն
 ես կը կարծեմ թէ այն մայրիներն
 1,000 տարեկանէ աւելի չեն: Վերի
 պատկերին մէջ կը տեսնուին այն
 մայրիներն որոնց սակ նստած են



ԼԻԲԱՆԱՆԻ ՄԱՅՐՈՒՆ

Մարկոս և անոր հայրը: Արդ կը
 խնդրեմ ձեր Սուրբ գիրքը բանալ և
 հոն փնտռել թէ ինչ կը գտնէք մայ-
 րիներուն վրայով:

Տղայոց Աւետարեի համար

Մ Ա Ր Ի Յ Ա

Փորրիկ բարեկամներ.

Կուզեմ ձեզի քանի մը տեղեկու-
 թիւններ տալ Մարկոս Տէր Սահփան-
 եանի վրայով, որ այս օրերս երկինք
 կանչուեցաւ 9 տարեկան հասակին
 մէջ: Մարկոս անցեալ տարւոյ գեկ.
 Այն կսկիւրդի հիւանդութեան բր-
 նուեցաւ, և երբ պէտք եղած դար-
 մանը կ'ընէին անոր, ան իր հօրը կ'ը-
 սէր. «Հայրիկ, պարապ տեղը զիս մի
 տանջէք, երկնից գուները բայցաւ
 են, և ես պիտի երթամ: Այսարհիս
 բոլոր բժիշկներն ալ եթէ դան զիս
 դարմանել, դարձեալ պիտի չլինան:»
 Մարկոս մեռնելէն օր մը առաջ, հօրը
 ձեռքը համբուրելով անոր օրհնու-
 թիւնը խնդրեց, նոյնպէս նաև մօրն

և եղբայր ձեռքերը պագաւ: Յետոյ
 ուզեց տեսնել իր դարձնակներն և
 գրացիները, և երբ անոնք եկան, ամե-
 նուն ձեռքը զատ զատ թոթուելով ա-
 նոնց, «Մնաք բարեաւ, ես Տէր Յիսու-
 սին կ'երթամ» ըսաւ: Երբ տեսաւ որ
 ծնողքն և բարեկամները կուրան ըսաւ.
 «Ինձի համար մէ լաք, ես մեծ ուրա-
 խութեան մէջ եմ, դուք ձեր մեղաց
 համար լացէք:» Քարոզին ալ Մարկո-
 սային անկողնոյն քովէն էր, երբ այս
 բաները կ'ըլլային: Մարկոս քարոզի-
 չէն խնդրեց որ «Քարեղէն սիրտ, արդ-
 զզ՛ա» երգն երգէ: Երբ այս երգն
 երգուեցաւ, Մարկոս դարձեալ
 խնդրեց որ «Ես պանդուխտ մ'եմ,»
 և, «Ել, հոգիս, թեւերդ լայն բաց» եր-
 գերն ալ երգուին: Այս երգերէն
 ետքն Աւետարան կարգացուեցաւ:
 Մարկոս բազմատարած և աչքերն
 երկինք վերցուցած ազօթք կ'ընէր, և
 մէկէն ըսաւ. «Ահա կը տես-
 նեմ Քրիստոս որ իր աթոռին
 վրայ բազմած է, ու սուրբեր
 անոր շուրջը պատած են, և ին-
 ծի կ'ըսեն, Եկուք»: Այս ըսե-
 լէն ետքը փոքրիկ քրոջը ձեռ-
 քէն բռնեց, և մօրը գաւ-
 նալով ըսաւ. «Մայր, ինչ որ
 երկուքիս պիտի ընէիր քրոջս
 միայն բրէ:» Մարկոս ինչ որ
 ունէր ընկերներուն բաժնեց,
 Ֆէսին վրայի ոսկիները կրա-
 րեց և կտակ ըրաւ որ անոնք
 եկեղեցիներուն բաժնուին:
 «Այսուհետեւ ոսկին ի՞նչ պի-
 տի ընեմ, ես կ'ուզեմ եր-
 կինք գանձ դիզել» ըսաւ.
 և քեզ մը հանդէսէն ետ-
 քը, «Մայր, պիտի մեռնիմ, պի-
 տի մեռնիմ, երկինքը բացուած է, և
 կը տեսնեմ որ սուրբերն անգին քա-
 ըրելով զարգարուած սեղանի մը շուր-
 ջը պատած են, և ոսկիէ քնարներ կը
 զարնեն, կ'ուզեմ անոնց խումբին
 մէջ խառնուիլ: Բոլոր գրքերս դա-
 գաղիս առջևէն տարէք, և ինձի հա-
 մար մի լաք» ըսաւ: Քիչ մը ետքը
 ձեռքերը կուրծքին դնելով հոգին
 աւանդեց, և սուրբ հրեշտակաց թե-
 լերով աշխարհիս սահմաններէն
 անցնելով, ինքն ալ հիմա այն գե-
 ղեցիկ քնար կը զարնէ և Գառնու-
 կին նոր երգը կ'երգէ:

Մերելի աղայք: անուշիկ Մարկոս
 իր Քրիստոսեական ազնիւ յատկու-
 թիւններովը հօրը տանը մէջ պայ-
 ծառ աստղի մը պէս կը փայլէր, և
 ապագային համար բերկրալի յոյսեր
 կուտար: Անոր վրայ գրելու շատ բա-
 ներ կան, բայց ես այսչափը միայն
 կը գրեմ, և կը խրատեմ զձեզ որ
 անոր նմանուղ ըլլաք, և հիմակուց
 զձեզ Յիսուսին նուիրէք:
 Կարբերք

ՅՈՒՆՈՒՄԻ ՀԱՆՆԵԼՈՒԿԸ



Կարծենք որ ամսօրեայ Աւետարեբը կարգացողներուն մէջ շատ նորամիտ աղայք կան : Յունուարի հանելուկին իրրքսան պատասխան ընդունեցինք, և բայ ի մէկէն բոլորն ալ ուղիղ էին : Դժուար եղաւ մեզ ընա-

րել թէ որոնք են ոճոյ, ուղղագրութեան և դեղեկագրութեան նախելով ամենէն աղէկ գրուած պատասխանները : Վերջապէս խորքերդէն Արշակ Շմաւոնեանին, Այնթապէն Չենոր Պեղճեանին և Կէմէրէքէն Գրիգոր Վարդավառեանին դրած պատասխանները մրցանակը շահեցան : Այս երեք աղայոց առաջինը Հայերէն, երկրորդը Հայ. գրով Թուրքերէն, և երրորդը Յունարէն գրով Թուրքերէն Տղայոց Աւետարեբներէն մէկ մէկ օրինակ պիտի ընդունին այս տարի :

ՀԱՆՆԵԼՈՒԿԻ ՊԱՏԱՍԻԱՆ

Յունուար ամսոյ Տղայոց Աւետարեբին մէջ հանելուկ մը կար : Ինծի կը թուի թէ այն հանելուկին լուծումը Ա. Թադ. Չ. գլխուն 10—15 համարներուն մէջ կը գտնուի :

Ակամայ իրենց պղտիկներէն զատուեցան այն կաթնաու երինջները, որ Աստուծոյ տապանակը Փղշտացոց երկրէն իսրայելացոց երկիրը կը տանէին :

Անոնք Աստուծոյ տապանակին երթալու ճամբան չէին գիտեր, բայց Աստուած առաջնորդեց անոնց :

Անոնք բնաւ Աստուծոյ համար գործ մը ըրած չէին առաջ, բայց հիմա ըրին :

Փղշտացոց հինգ նախարարները անոնց ետեւէն երթալով կը դիտէին թէ սրբեօք իսրայելացոց Աստուածը անոնց առաջնորդելու կարող է :

Եւ այսպէս Փղշտացիք Աստուծոյ ամենակարողութիւնը գիտցան :

Թէև երինջները զԱստուած չէին ճանչնար, այսու ամենայնիւ Աստուծոյ ուղակէզ եղան :

ԱՐՇԱԿ ՇՄԱՒՈՆԵԱՆ
Խարբերդ, փետր. 5, 1876



ԵՆԻ ՃԱՄԻ ՄՕՏ ՆԱՏՈՂ ԳՐԱԳԻՐ ՄԸ

ԽՕՄՔ ՄԸ ԱՅՆ ՏՂՈՑ ՈՐ ԴՊՐՈՑ ԵՐԹԱԼ ՉԵՆ ՈՒՉԵՐ

Սիրելի աղայք :

Չեզի համար միջոց մը դասայ որով դուք պիտի կրնաք ապրիլ առանց կարգալ և գրել սորվելու : Այս ուրախաւիթ լուր չէ՞ ձեզ : Գիտե՞մ որ կը ցաւիք երբ դպրոցի ժամանակը դայ, և որչափ կարելի է կը խաղաք դպրոցին մէջ, նաև երբ դպրոցի ժամանակը կ'աւարտի, ուրախ կ'ըլլաք բանտէն վախճող մարդու մը պէս : Բնաւ փափաք չունիք կարգալ և գրել սորվելու : Մանաւանդ երբ գրելու փորձ կ'ընէք, ձեր մատերը թանաքով կ'աղատէք և ձեր թղթերը ձեր մատերուն թանաքի բիծերով կը ծածկուին : Կարգալ և գրել սորվելու ձանձրութենէն ղձեղ աղատելու համար ես հետևեալ միջոցը դասայ : Մարդ մը գտնելու էք որ ձեզի համար կարգայ և գրէ : Ես այս միջոցը դասայ պատմութիւն կարգացած ատենա : Այնպէս կ'երևի թէ, հին ատեններն Եւրոպայի հարուստներն իրենց տուններուն մէջ յատուկ մարդեկ կը պահէին որ իրենց համար կարգան և գրեն : Դուք չէք կրնար ունենալ սպասաւոր մը որ ձեզի համար կարգայ և գրէ, բայց կրնաք այն բանը ձեր եղբայրներուն կամ քոյրերուն ընել տալ : Կամ կրնաք այնպիսի մէկու մը երթալ որ ուրիշներուն համար գրելու կը նստի, ինչպէս են Պոլսոյ մէջ Ենի ճամի թըղթատան դրան մօտ նստող զրազիրները, որոնց մէկուն պատկերը վերը կը տեսնէք : Կարգալ սորվելու ձանձ-

րութենէն ազատելու աղէկ միջոց մը չէ՞ այս :

Եթէ կարգալ չսորվիք, իրաւ է որ կարող պիտի չըլլաք Սուրբ գիրք կամ ուրիշ աղէկ գրքեր և ոչ ալ այս Տղայոց Աւետարեբը կարգալու, և ոչ իսկ նամակ գրելու, կամ ձեզի եկած նամակները կարգալու, բայց դպրոց երթալէ ալ ազատ պիտի ըլլաք : Սիրելի աղայք, այս բաներուն վրայ խորհեցէք : Դպրոց երթալով կարգալ գրել սորվելու, թէ ծոյլ կենալով բան չսորվիլն աղէկ է :

ՍՈՒՐԲ ԳԻՐԲ ԿԱՐԴԱՅՈՂ ՓՈՒՐ ՏՂՈՑ ՀԱՄԱՐ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մեծ ազգի մը թագաւորը ծպտեալ կերպարանք մտաւ, և իր հետ երկու մարդ առնելով գիշեր ատեն գնաց հռչակաւոր կախարգ կնաջ մը տունը որպէս զի անկէ իմանայ ապագային դաղանիքը զորս Տէրը թագաւորէն պահած էր : Կախարգ կինը առջի բերան գժուարեցաւ թագաւորին կամքը կատարել, բայց ետքը երբ ստիպուեցաւ, կախարգութեամբ կանչեց թագաւորին վաղեմի բարեկամներէն մին որ շատոնց մեռած էր : Այն ատեն բան մը պատահեցաւ որ կախարգ կինը ստիպումով լեցուց, և այնչափ խորին աղագեցութիւն ըրաւ թագաւորին վրայ որ դետինը ինկաւ և չկրցաւ շարժիլ : Կախարգը, որչափ կարելի էր, լաւ կերակուր պատրաստեց թագաւորին, որ զայն ուտելով ստք ելաւ և իր անցը գնաց : Հետևեալ օրը թագաւորն սպաննուեցաւ :

Ո՞վ էր այն բարեկամը զոր թագաւորը կախարգ կնաջ միջոցաւ կանչել առաւ : Այս պատմութիւնը Սուրբ գրոց ո՞ր մասին մէջ կը գտնուի :

ԱՆՅԵԱԼ ՍՄՍՈՑ ՀԱՐՅՄԱՆՑ ՊԱՏԱՍԻԱՆՆԵՐԸ

Խուճը մը մարդիկը մարդարէից որդիքն էին, անոնց առաջնորդն էր Եղիսէ, զեան էր Յորդանան : Դ. Թադ. Չ. 1—7.

Ամերիկայի միսիոնարաց ընկերութեան կողմէն Խմբագիր ձ. Բ. Կրին

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ
ՏՂԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆԻ
Ձագմագճըլա, Յակոբեան խան, Թիւ. 12.